30. ՕՁՎԵՆԻ ԾԱՌ

Կէղի, չէղի պառավ, տղե մի կէղի։ Ուրանց իդարեն մեկ կաժի վրեն ա։ Մամն ա, ղկաժ կմանա, տղեն կտանա կծախա։

Օրերուց օր մի տղեն կտանա ղկաժ օր թը ծախա։ Ճժեր թափած քութըք (լակոտ) կխեխթին։

Կըսե.— Տղա, իդա կաժ առեք ծըզի, իդա շան քութըք տվեք ընձի, խեղճ ա, մեխք ա։

Ճժեր կաժ կառնին ուրանց, քութըք կիտան ընդրան։

Կբերա տուն, մամ կկովըտի, կեսա.— Լաո՛, մեռանք անոթի, հ՞որի՞ կաժ տվիր, առար զէդ շան քութըք, մըր իդարեն վըր էդ կաժին էր, մենք անութ ինք, շան քութըք ի՞նչ կէնիս։

Գելի էնօր լէ բամբակ կմանա, կենա կաժ օր տանին ծախին, ուրանց խաց առնին ուտին։ Մամ կմանա ղկաժ, տղեն գելի, կտանի կծախի։ Կտանի կաչքի օր ճժեր կատվի մի ձաք կխեխթին, կըսա.

— Առեք իդա կաժ ծըզիկ, կատվի ձաք տվեք ընձիկ, մեխք ա, մըխե՛խթեք։

Էն օր լէ կառի զկատվի ձաք, գիգա տուն։ Էն օր լէ կմնան անոթի։ Մամ կկովտի խետ տղին, կեսա.

— Լաո՛, մեռանք անոթի իդա էրկու օր։

Կեսա.— Մարե, խեղճ ա, մարե, բան չէղի, էսօր լէ կմնանք անոթի։

Օլոր օր էլման մամ կաժ կմանա, գելի տղեն կտանա օր ծա-խա, կտեսի օր ճժեր բերած օձի ձաք կփիթցուն։

Կեսա.— Տղա, իդա կաժ առեք ձրզի, իդա օձի ձաք տվեք ընձի, խեղճ ա, մեխք ա։

Զէդ կաժ կիտա, օձի ձաք կառի, կբերա, խորա ուր դուռ, գիդա տուն։

Մամ կեսա.— Լաո՛, մեռանք անոթի, հ՛որի՞ իդա ջանավարներ կքոմիս։

Տղեն լէ կեսա.— Մարե՛, խեղճ ի՛ն, մեխք ի՛ն, բան չէղի։

Էդ օձ կէղի բարդի ծառ, դու չուտիս չխմիս՝ թամաշա էնիս էդ բարդի ծառ։

Մամն ա սիրողութեն կէնա։ Մամն ու սիրող կէնին օր թը զտղին կորցուն։

Սիրող կէրթա կնստի հ՛օդեն, կեսա.— Ախպեր, իդա ֆիլան տղի դուռ էդ խորոտիկ ծառն էղեր ա։

Տղեն լէ կեսա.— Էն, որ իմ ծառի փետ ժիրա դինա ինչ ա, իմ ծառ խասի ուրին։

Մամու սիրող կեսա.— Օր ես խանեցի, ծառ խասի՞ ընձի։

Կեսա.— Խա՛։

Իրեք օր գիշեր ու ցորեկ իդա հ՛օդի մարդիկ կէնին, չէնին՝ չկերնան հանին թը իդա ծառի փետի անուն ի՞նչ ա։

Էդ մամու սիրող կեսա.— Չկերնա՞ս դնիս քու տղի վրեն, իդա ծառի անուն ըսե, օր ըսեց, տուն կխասի ընձիկ ու քրզիկ, քու տղեն կթորկա ընդեխեն կկուրիսի։

Կեսա.— Իմա՞լ էնիմ, օր ես տամ ըսել, դու լսես։

Կեսա.— Չի փաթրթա խսիլ, ես կկանիմ իդա քունջ, էն օր էկավ, դու խիվընդցի, պառկի, օր խարցուց՝ «Մարե, դու հ՛որի խիվանդ իս», դու ըսա՝ «Լաո, կմեռնիմ, քու ծառի անուն լէ ընձի չասեցիր»։

Մամ կփաթրթա զսիրող խրսլի մեջ ու կկանեցու քունջ։ Իդա հախս ինք լէ գելի ուր տեխ կթալա, խինդ վեց չոր լոշ կպարզա ուր ջլերու մեջ, շարշափ կթալա վրեն ու կպառկի իդա լոշերու վրեն։

Տեսի տղեն գիգա։ Ծանր կտքա մամ (կնկա ֆել ա)։

Տղեն կեսա.— Մարե ջան, հ՛որի՞ կտքաս։

Կեսա.— Լաո՛, խիվանդ իմ, կմեռնիմ։

Գիգա, կնստի մամու խեչ, ծեռ կդրա մամու դլխուն։

Մամ կեսա,— Լաո՛, ես կմեռնիմ, դու քու ծառի անուն ընձի չըսեցիր, մացի քասարով, կմեռնիմ։

Կեսա— Մարե ջան, դու մի մեռնի, ես կեսիմ քըզի։

Փըշըմը դախ օր կմնա, մամ կեսա.— Լաո՛, դե՛ ըսա։

Բերան կդնա մամու անգնջի վրեն, գողտու կեսա.

— Մարե՛, օձենի՛ ա, օձենի՛։

Կեսա.— Լաո՛, ի՞նչ։

Կեսա գողտու.— Օձենի՛ ա, օձենի՛։

Կեսա.— Լաո՛, գյառ իմ (խուլ), չլսիմ, կայիմ ըսա, խո մարդ չկա՞ էդ տեխրանք, վո՞ր կա, օր լսա։

Էլման գողտու կեսա.— Մարե՛, օձենի՛ ա, օձենի՛։

Մամ լէ գլխանց, բանձր կբոռա՝ «Օձենի՞»։

Կեսա.— Մարե՛, հաշ կեցի, օձենի ա։

Մամ լէ կբոռա, կեսա.— Օձենի՞,— խստու էլման օր սիրող լսա։

Սիրող կլսա, գելի էդ տեխեն կէրթա կնստի հ՝օդեն, կտեսի տղեն գիգա հ՝օդեն։

Կեսա.— Արի, էսօր ես քու ծառի անուն կխանիմ. գիշեր մեջ էրիմ ընկեր ա իմ միտ։

Կեսա.— Դու ասա, ս՛անք ի՞նչ ա օր դու կգինաս։

Կեսա.— Խավկըթենի ա։

Կեսա.— Չէ՛։

Կեսա.— Նոռկենի ա։

Կեսա.— Չէ՛։

Կեսա.— Մսուրի ա։

Կեսա.— Չէ՛։

Կեսա.— Խացենի ա։

Կեսա.— Չէ՛։

Կեսա.— Օձենի ա։

Կեսա.— Վոլլա՛, խանեցիր։

Կեսա.— Հ՝օդի մարդիկ, շահադ էղիք, ընդրա օձենի ծառ խաստավ ընձիկ։

Ծառի տեր կմառախոտի, կքուփոթի, գիգա տուն, կեսա.

— Մարե, իմ ծառի անուն խանեցին, իմ ծառ ծեռնե առան։

Էն լէ կեսա.— Որն օր անուն իտա, պտի առնի, հըպա ի՞նչ կէղնի։

Կմնա էրկու օր, իրեք օր, տղեն քուփու կմեռնի։ Գելի, կեսա.— Պտի էրթամ ֆալագի մոտ գանգատ։

Մամ կթխա զխաց, ինք լէ կառի ուր գարու խաց ու կէրթա։

Սիրող ու մամ կուրբխնան, թը տղեն գնաց, տուն խասավ մըզիկ, ծառ խասավ մըզիկ։

Տղեն գելի շատ ճամբախ կէրթա, էրկու խորոտիկ ախչիկ գելին ուր հ'առեճ։

Ախչկներ կեսին.— Տղա՛, կէրթաս դո՞ր։

Տղեն կեսա.— Կէրթամ ֆալագի մոտ գանգատ։

Կեսին.— Աստված սիրիս՝ մեր գանգատ լէ էնիս։

Կեսա.— Ծեր գանգատ ի՞նչ ա։

Կեսին.— Մենք խընց հ'ըմեն խորոտ, խընց հ'ըմեն ժիր, խընց հ'ըմեն աղեկ, հ'որի՞ խլղի ախչիկներ կտանին, հ'որի՞ մըզի չտանին։

Տղեն հ'ոցքի գելի կերթա, կեսա.— Կէնի՛մ, ծեր գանգատ լէ կէնի՛մ։

Կերթա, ծառի մը ռաստ գիգա, ծառի պտղներ՝ համ լէ ճոչ, դոդոա պտուղ ին, ամեն մեկ նուկի ին, օր կդնիս քու բերան, օձի փոր ա, լեղի ա։

Ծառ ըսեց.— Տղա հ'ո՞ւր կէրթաս։

Ըսեց.— Կէրթամ ֆալագի մոտ գանգատ։

Կեսա.— Տղա՛, աստված սիրիս, իմ գանգատ լէ էնիս։

Կեսա.— Քու գանգատ ի՞նչ ա։

Կեսա.— Իմ պտուղ խընց հ'ըմեն խորոտ, ճոչ, հ'ըմեն ծառի պտուղ կուտվի, իմուն չուտվի։

Գելի էդ տեխեն կէրթա, կեսա.— Թըխ էղնի, քու գանգատ լէ կէնիմ։

Կէրթա, շատ ճամբախ կէրթա, ծովի մի ռաստ գիգա։ Վիշապ մի մեջ ճրուն ա, ուր չըմչրախ (օձու ոսկե գլուխը) ուր գլոխն ա։ Վիշապ կեսա.

— Տղա, կէրթաս դո՞ր։

Կեսա.— Կէրթամ ֆալագի մոտ գանգատ։

Կեսա.— Աստված սիրիս, տղա, իմ գանգատ լէ էնիս։

Կեսա.— Քու գանգատ ի՞նչ ա։

Կեսա.— Իմ ջանդկի կես մեջ ճրուն ա, ձկներ, կոտկիրիրեք, ջանավար կերան, ջանդկի կես լէ արևու հ'առեճ դուրս, իրիցա։

Կեսա.— Թ՛էղնի։

Տղեն շատ ճամբախ կէրթա, կտեսնի ճրտգվոր մի օր ուր բոստան կճրա։ Տղեն բարև կիտա էդ ճրտգվորին։

Ճրտգվոր կեսա.— Տղա՛, կէրթաս դո՞ր։

Կեսա.— Կերթամ ֆալագի մոտ գանգատ։

Էն լէ կեսա.— Ֆալագն ես իմ, արի ս՛անք քու գանգատ ի՞նչ ա։

Կեսա.— Օր դու ֆալագ մ՛իս, հ՛որի՞ ես էկի օդա ճրդու կէնիս։

Կեսա.— Ես աստծու օլամչի մարդն իմ։

Կեսա.— Իդա ճրդուկ ի՞նչ ա կէնիս, բոստան կճրիս։

Ֆալագ լէ տղին կեսա.— Կտեսիս իդա հ՛առուն, իդա հ՛առուն օր ճուր կտրեցի, էն տուն աղքտցավ դավլաթ դյուշգուն էղավ, իդա հախս օր ճուր թորկիմ էմեկել հ՛առուն, էնիկ կդոլվաթվորնա։

Կեսա.— Դու ֆալագն ի՞ս։

Կեսա.— Խա՛։

Կեսա.— Ֆալա՛գ, իմ մամ կաժ կմաներ, ես տարա տվեցի, առա կատվի մը ձաք, էկա, խղճացի, մեխք էր, ճժեր կխեխթեն, չթորկեցի օր խեխթեն։ Էն օր մացինք անոթի։ Կատուն առի էկա մեր տուն։ Օլոր օր իմ մամ էմլա կաժ մի մանեց, տարա տվեցի. առա շան քութըքմ, ճժեր կխեխթեն, ըսի մեխք ա։ Շան քութըք լէ բերի տուն։ Էն օր լէ մացինք անոթի[1]։ Օլոր օր մի իմ մամ կաժմ լէ մանեց, տարա, գացի օր ճժեր օձի մի ձաք մի կխեխթեն. էն կաժ տվի, առա զէդ օձի ձաք ու էկա, խորեցի մեր դուռ, էլավ խորոտիկ բարդի մի ծառ։ Էն օր լէ մացինք անոթի, էլավ իրեք օր։ Գեղի տղեքներ դրին վըր ընձի, թե՝ ծառի անուն ըսիս, ես լէ ըսի՝ որ խանեց, թեղնի ուրին։ Իրեք օր գիշեր, ցորեկ էրեցին, չէրին, չկերցան խանեցին[2]։ Էն մեկ օր մեկ մարդ մի խանեց, մկա իմ տուն լէ, իմ խորոտիկ ծառ լէ խասի ընդրան։

Էն լէ ըսեց.— Տղա՛, էն մարդ օր ըսեց՝ քու մամու սիրողն ա, քու մամ քըզնեի փորձ առավ, ընդրան խասկցուց, էն լէ էկավ քզի ըսեց ու առավ։ (Աստծու մարդ էր, հ՛ըմեն բան լէ կգիներ)։

Կեսա.— Ապա ես իմա՞լ էնիմ։

Կեսա.— Տղա՛, դնա, խեղճ իս, հար օդա էկեր իս քու խաթըրի խամար, արևմուտքին դեն արև կխանիմ, արևելուց դեն ուրհաթի, քու ծառ լէ խասի քըզի։

Տղեն կեսա.— Ֆալագ, կանի իրեք մարդու լէ գանգատ կէնիմ։

Կեսա.— Գանգատն էրա։

Կեսա.— Ճամբախ էկա, ծովու մեն ռաստ էկա, վիշապ մի մեջ ծովուն էր, ըսեց՝ «Տղա, կէրթաս դո՞ր», ըսի՝ կէրթամ ֆալագի մոտ գանգատ, ըսեց՝ «Իմ գանգատ լէ էնիս». ըսի՝ քու գանգատ ի՞նչ ա, ըսեց՝ «Իմ շանդկի կես մըլ ծովուն էր, ծկներ կերան, կոտկիրիրեք,

---

1 Բն. տուն (Ս. Կ.)։

2 Բն. կերցան խանեցին (Ս. Կ.)։

ջանավարներ կերան, իմ ջանդրկի կես լէ դուրս, արևու հ՚առեջ իրի-ցավ»։

Ֆալագ լէ տղին կեսա.— Տղա, էն վիշպու գլոխ չըմչըրախ մի կա, օր գացիր, զարկ, առ փախի, տար քըզի. էն վիշապ կէրթա մըշ ճրուն, էն չըմչրախի շաֆխկն գիգա էն ծկներ, էն չըմչրախին մա-շուխն ին, կթափին էն վիշպի ջանդակ կուտին։

Կեսա.— Ֆալագ, ես էկա ծառի մե ռաստ էկա, ծառն ընձի ըսեց. «Տղա, կէրթաս դո՞ր». ըսի՝ կէրթամ ֆալագի մոտ գանգատ, ըսեց. «Աստված սիրիս, իմ գանգատ լէ էնիս, ըսեց, իմ պտուղ խընց հ՚ըմնուն ճոչ, պետ, խորոտ, հ՚որի՞ն ուրիշ ծառերու պտուղ կուտ-վի, իմ պտուղ չուտվի»։

Ֆալագ լէ ըսեց.— Էրկու գումգում (մետաղե սափոր) օսկի էն ծառի տակ խորուկ ա, գնա, խանա, առ գնա քըզի, էն պտուղ կա-նուշի, էն օսկու ժանգն ա կթալա պտուղի վրեն։

Տղեն կեսա.— Ֆալագ, ես էկա, էրկու ըզաբ ախչիկ էկան ձիկ ռաստ, ըսին՝ «Դո՞ր կէրթաս», ըսի՝ «Կէրթամ ֆալագի մոտ գան-գատ»։ Ըսին. «Աստված սիրիս, մեր գանգատ լէ էնիս. մենք խընց հ՚մեն խորոտ, խընց հ՚ըմեն ժիր, խընց հ՚ըմեն անկալատ, հ՚որի՞ հ՚մեն կտանին, հ՚որի՞ մըզի չտանին»։

Ֆալագ կեսա.— Ինոնք գելին աղոթրնի էրես կպոշին, ընդոնց բախտն ա կապվե։

Տղեն գելի իզին կառի ֆալագից ու գիգա։ Գիգա կզարգա վիշ-պի չըմչրախ կառի, կփախի։ Վիշապ կէրթա մեշ ճրուն։ Գիգա ծառի տակի էրկու գումգում օսկի կխանա կտանա ուրին, ընդրա պտուղ լէ կանուշի։ Գիգա ախչիկներուն ռաստ, ախչկներ ըսին. «Մեր գան-գատ էրի՞ր»։

Ըսեց.— Խա, ֆալագն ըսեց, ընդրանք գելին աղոթրնի դեմ կպոշին ուրանց բախտ կբացվի։

Իդա հախս գիգա ուր տուն։ Օդին մարդեկաց կեսա.— Արիք շարթ մի բռնինք։

Մարգիկ կեսին.— Թրխ էղնի։

Կեսա.— Արևմուտքի դեն արև ելի, արևելաց դեն ուրհաթի, ծառ խասի՞ ընձի։

Ընդոք լէ տնազ կէնին, կեսին.— Հա՜, հա՜, հա՜, արևմուտ-քից իրմա՞լ արև գելի, արևելոց դեն լէ ուրհաթի,— ինդոք լէ կե-սին.— Խա՜, ախպեր, օր թը արև արևմուտքից էլավ, արևելոց դեն ուրհաթավ, քու ծառ խասի քըզի։

Սաբախտան գելին, արև արևմուտքից գելի, իրիկուն՝ արևելոց դեն կոըհաթի։

Էդ մարդիկ կաջեբնան։

Իրեք օր արև արևմուտք գելի, արևելք կոըհաթի, ծառ կխասի տղին։

Ծառ օր կառնա, զուր մեր ու ուր սիրող լէ կսպանա, նոր կկարքվի, կնիկմ է կբերա, նոր կէղի տուն ու տեղ։ Ինոնք խասան ուրանց մուրազին, դու լէ խասնիս քու մուրազին։